## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Ագարակի քաղաքային համայնք.Գարեգին Նժդեհ 5,
հեռ.(0286)22567 էլ-հասցե՝ agarak.syuniq@mta.gov.am

**Թիվ 569**
*15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015թ.*

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ**
**ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ**

Հարգելի պարո՛ն Խաչատրյան,

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N48-Ա, N49-Ն, N50-Ն, N51-Ն, N52-Ա, N53-Ա որոշումները:

**ՔԱՂԱՔԱՊԵՏ՝** **Մ. ԶԱՔԱՐՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Ավետիսյան*
*Հեռ. 0286-2-25-67*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ N 9705
«22» 12 2015թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Ագարակի քաղաքային համայնք.Գարեգին Նժդեհ 5,
հեռ.(0286)22567 էլ-հասցե՝ agarak.syuniq@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

*11 դեկտեմբերի 2015 թվական N48 –Ա*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 14-րդ հոդվածներով, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի ավագանին*

***որոշում է՝***

*Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 11-ի N11 նիստի օրակարգը՝*

*1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի տարածքում օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների 2016 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:*

*2.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի կողմից 2016 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:*

*3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն 2016 թվականին օգտագործման տրամադրելու և օտարելու, հրապարակային սակարկությունների վարձավճարների և օտարման մեկնարկային գները հաստատելու մասին:*

*4.«Ագարակի բնակարանային կոմունալ տնտեսություն և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Ագարակի քաղաքային համայնք.Գարեգին Նժդեհ 5,
հեռ.(0286)22567 էլ-հասցե` agarak.syuniq@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

*11 դեկտեմբերի 2015 թվականի N49 - Ն*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի ավագանին*

***որոշում է՝***

*1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի տարածքում օրենքով սահմանված տեղական տուրքերի 2016 թվականի դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի:*

*2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի տարածքում օրենքով սահմանված տեղական վճարների 2016 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:*

*3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:*

*Կողմ (7)* *Դեմ(0)* *Ձեռնպահ(0)*

*ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ*
*ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ*
*ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ*
*ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱԹԵՎՈՍ*
*ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲՈՒՐԱՍՏԱՆ*
*ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱՐՏՈՒՐ*
*ՕՀԱՆՅԱՆ ԼԻԲԻԿ*

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ*

*2015թ. դեկտեմբերի 11*
*ք.Ագարակ*

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի
քաղաքային համայնքի
ավագանու 2015 թ. դեկտեմբերի 11 -ի
N49-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝

**հիմնական օբյեկտների համար՝**

1)մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ,

2) Սույն կետի 1-ին ենթակետի «1» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 (երեսուն հազար) դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ

**ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝**

3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3 000 (երեք հազար) դրամ,

4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ:

2.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3 000 (երեք հազար) դրամ,

2)բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով

օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3)նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝ 5 000 (հինգ հազար) դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 12 000 (տասներկու հազար) դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 10 000 (տաս հազար) դրամ:

5.Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար 200 (երկու հարյուր ) դրամ՝ 1 քառակուսի մետրի համար,

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 180 000 (մեկ հարյուր ութսուն հազար) դրամ,

3)խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 40 000 (քառասուն հազար) դրամ,

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝

հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 5 000 (հինգ հազար) դրամ,

ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ 1 000 (մեկ հազար) դրամ,

6.Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50 000 (հիսուն հազար) դրամ:

7.Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24$^{00}$-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 100 000 (հարյուր հազար) դրամ,
3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ,
4) խաղատների կազմակերպման համար՝ 1 000 000 (մեկ միլիոն) դրամ,
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 500 000 (հինգ հարյուր հազար) դրամ,
6)վիճակախաղերի կազմակերպման համար՝ 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) դրամ:

8.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1 500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500(երկու հազար հինգ հարյուր) դրամ,
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ,
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 (յոթ հարյուր) դրամ:

9.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000 (մեկ հազար) դրամ:

10.Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 10 000 (տաս հազար) դրամ:

11.«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50 000 (հիսուն հազար) դրամ:

12.Համաքաղաքային կանոններին համապատասխան համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1000 դրամ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի
քաղաքային համայնքի ավագանու
2015 թ. դեկտեմբերի 11 -ի
N49-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 25 000 (քսանհինգ հազար) դրամ:

2.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանվում է՝ 20 000 (քսան հազար) դրամ:

3.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար սահմանվում է՝ 10 000 (տաս հազար) դրամ:

4.Համայնքի տարածքում աղբահանություն կազմակեպելու և իրականացնելու համար աղբահանության վճար սահմանվում է՝

1)կենցաղային աղբի համար՝ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 400 (չորս հարյուր) դրամ,

2)ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 3000 (երեք հազար) դրամ:

5.Համայնքի տարածքում շինարարական և խոշոր եզրաչափի մեկ խորանարդ մետր աղբի հավաքման և փոխադրման թույլտվության համար վճար սահմանել՝ 500 (հինգ հարյուր) դրամ:

6. Սահմանավում է զեղչ.

աղբահանության վճարը Ագարակ քաղաքում հաշվառում ունեցող և բնակվող յուրաքանչյուր բնակչի համար 150 (մեկ հարյուր հիսուն) դրամ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Ագարակի քաղաքային համայնք.Գարեգին Նժդեհ 5,
հեռ.(0286)22567 էլ-հասցե՝ agarak.syuniq@mta.gov.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*11 դեկտեմբերի 2015 թվականի N50-Ն*

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով, հաշվի առնելով քաղաքապետի առաջարկը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի ավագանին*

***որոշում է՝***

*1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի կողմից 2016 թվականին մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:*
*2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:*

| *Կողմ (7)* | *Դեմ(0)* | *Ձեռնպահ(0)* |
|---|---|---|
| *ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ* | | |
| *ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ* | | |
| *ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ* | | |
| *ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱԹԵՎՈՍ* | | |
| *ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲՈՒՐԱՍՏԱՆ* | | |
| *ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱՐՏՈՒՐ* | | |
| *ՕՀԱՆՅԱՆ ԼԻԲԻԿ* | | |

*ՔԱՂԱՔԱՊԵՏ՝* *Մ. ԶԱՔԱՐՅԱՆ*

*2015թ. դեկտեմբերի 11*
*ք.Ագարակ*

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի
քաղաքային համայնքի ավագանու
2015թ. դեկտեմբերի 11-ի N 50-Ն որոշման

# ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1.«Ագարակ քաղաքի թիվ 1 մ/մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպութ յուն հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2016 թվականի համար սահմանվում է 5 000 (հինգ հազար դրամ):

2.«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2016 թվականի համար սահմանվում է՝ 3 000 (երեք հազար դրամ), բացառությամբ՝ պարային բաժին հաճախող մեկ երեխայի ամսական վարձավճարը 2016 թվականի համար սահմանվում է՝ 4 000 (չորս հազար դրամ):

3.Ագարակ քաղաքի վարչական տարածքում տեղակայված անշարժ գույքի համարակալման և հասցեավորման համար վճարի չափ սահմանվում է՝

1) ֆիզիկական անձանց սեփականություն համարվող բազմաբնակարան շենքերի բնակարանների ու բնակելի տների համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ,

2) ֆիզիկական անձանց սեփականություն համարվող ոչ բնակելի շինությունների, հողամա սերի համար՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ,

3) իրավաբանական անձանց սեփականություն համարվող անշարժ գույքի համար՝ 20 000 (քսան հազար) դրամ:

4. ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի մշակութային տան դահլիճի վարձակալական վճարի չափ սահմանվում է՝ մեկ միջոցառման անցկացման համար 50 000 (հիսուն հազար) դրամ, բարեգործական միջոցառումների համար զրո դրամ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Ագարակի քաղաքային համայնք.Գարեգին Նժդեհ 5,
հեռ.(0286)22567 էլ-հասցե՝ agarak.syuniq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

11 դեկտեմբերի 2015 թվականի N51-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48¹ հոդվածի, 67-րդ հոդվածի, 81-րդ հոդվածի 3-րդ, 94-րդ հոդվածի 6-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման կարգը,տարածագնահատման գործակիցները և սահմանները հաստատելու մասին» թիվ 1746-Ն և 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» N286 որոշումները, քաղաքապետի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի ավագանին

**որոշում է՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն 2016 թվականին օգտագործման տրամադրելու և օտարելու, հրապարակային սակարկությունների վարձավճարների և օտարման մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱԹԵՎՈՍ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲՈՒՐԱՍՏԱՆ
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՕՀԱՆՅԱՆ ԼԻԲԻԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2015թ. դեկտեմբերի 11
ք.Ագարակ

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի
քաղաքային համայնքի ավագանու
2015թ. դեկտեմբերի 11-ի N51-Ն որոշման

## ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ

1.Ագարակ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողամասերն 2016 թվականին օտարելու հրապարակային սակարկությունների մեկնարկային գինը 1քմ-ի համար հաստատվում է 50 (հիսուն) դրամ:
2.Ագարակ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն 2016 թվականին օտարելու հրապարակային սակարկությունների մեկնարկային գները 1քմ համար հաստատվում է՝
1)Բնակավայրիհողեր՝
ա) բնակելի կառուցապատման՝ 500 (հինգ հարյուր) դրամ,
բ) խառը կառուցապատման՝ 600 (վեց հարյուր) դրամ,
գ) հասարակական կառուցապատման՝ 600 (վեց հարյուր) դրամ,
դ) այլ հողեր՝ 600 (վեց հարյուր) դրամ,
2) Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 600 (վեց հարյուր) դրամ,
3)Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1000 (մեկ հազար) դրամ:
3.Ագարակ քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողերը 2016 թվականին կառուցապատման նպատակով տրամադրելու համար տարեկան վարձավճարների մեկնարկային գները 1քմ համար հաստատվում է՝
ա) առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի համար՝ 1000 (մեկ հազար) դրամ:
բ) մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրվող հողամասերի համար՝ 900 (ինը հարյուր) դրամ:
4.Ագարակ քաղաքային համայնքում ավտոտնակների կառուցապատման համար 2016 թվականին հատկացվող հողատարածքների 1քմ տարեկան վարձավճարի չափը հաստատվում է՝ 100 (մեկ հարյուր) դրամ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Ագարակի քաղաքային համայնք.Գարեգին Նժդեհ 5,
հեռ.(0286)22567 էլ-հասցե՝ agarak.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*11 դեկտեմբեր 2015 թվականի N52 - Ա*

*« ԱԳԱՐԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի ավագանին*

***որոշում է՝***

*1.Հաստատել «Ագարակի բնակարանային կոմունալ տնտեսություն և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի (կցվում է):*

*2.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 10-ի ««Ագարակի բնակարանային կոմունալ տնտեսություն և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N24-Ա որոշումը:*

*3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:*

| Կողմ (7) | Դեմ(0) | Ձեռնպահ(0) |
|---|---|---|
| ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | | |
| ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ | | |
| ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ | | |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱԹԵՎՈՍ | | |
| ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲՈՒՐԱՍՏԱՆ | | |
| ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱՐՏՈՒՐ | | |
| ՕՀԱՆՅԱՆ ԼԻԲԻԿ | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ՋԱՔԱՐՅԱՆ

*2015թ. դեկտեմբերի 11*
*ք.Ագարակ*

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Ագարակ
քաղաքային համայնքի ավագանու
2015 թվականի 11 դեկտեմբերի
N 52 որոշման

# «ԱԳԱՐԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»ՀՈԱԿ
# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ,ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 41 մարդ

2.Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

| Պաշտոնների անվանումը | Հաստիքային միավորների թիվը | Դրույքաչափը | ամսական աշխատավարձ | ընդամենը տարեկան աշխ. ֆոնդը |
|---|---|---|---|---|
| Տնօրեն | 1 | 122000 | 122000 | 1464000 |
| Շահագործման գծով տեղակալ | 1 | 120000 | 120000 | 1440000 |
| Ճարտարագետ-շինարար | 1 | 120000 | 120000 | 1440000 |
| Գլխ.հաշվապահ | 1 | 85000 | 85000 | 1020000 |
| Հաշվապահ | 1 | 78000 | 78000 | 936000 |
| Գանձապահ | 0.8 | 72752 | 58200 | 698400 |
| Գործավար | 1 | 77903 | 77903 | 934836 |
| Հսկիչ | 2.4 | 72752 | 174605 | 2095260 |
| Վարորդ | 5 | 120000 | 600000 | 7200000 |
| Բանվոր | 10 | 100000 | 1000000 | 12000000 |
| Մեխանիզատոր | 1 | 95000 | 95000 | 1140000 |
| Աշխ.ղեկ | 1 | 120000 | 120000 | 1440000 |
| Փականագործ | 1 | 100000 | 100000 | 1200000 |
| Հավաքարար | 7 | 85000 | 595000 | 7140000 |
| Էլեկտրիկ | 1 | 85000 | 85000 | 1020000 |
| Էլեկտրոզոդող | 1 | 100000 | 100000 | 1200000 |
| Գյուղատնտես | 1 | 90000 | 90000 | 1080000 |
| Պահակ | 2 | 77903 | 155806 | 1869672 |
| Օպերատոր | 1 | 77903 | 77903 | 934836 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 40.2 | | 3854417 | 46253004 |

Տնօրեն Ա. Մանդալյան

Գլխ. Հաշվապահ Ա. Մանասյան

Քաղաքապետ՝ Ս.Զաքարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Ագարակի քաղաքային համայնք.Գարեգին Նժդեհի 5,
հեռ.(0286)22567 էլ-հասցե` agarak.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2015 թվական N53 –Ա

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 20) կետով և հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի ավագանին*

***որոշում է՝***

1.«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել գույք՝ համաձայն 1 հավելվածի:
2.«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը օգտագործման հանձնել համայնքային սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն 2 հավելվածի:
3.Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱԹԵՎՈՍ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲՈՒՐԱՍՏԱՆ
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՕՀԱՆՅԱՆ ԼԻԲԻԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2015 թ. դեկտեմբերի 11
ք.Ագարակ

**Հավելված 1**
ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի
քաղաքային համայնքի ավագանու
2015թ. դեկտեմբերի 11-ի թիվ 53 –Ա որոշման

**Ց Ա Ն Կ**

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի

| Հ/Հ | ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱ | ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ | ՔԱՆԱԿ | ՄԻԱՎՈՐԻ ԳԻՆ /ՀՀ դրամ/ | ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գեղարվեստական նկար | հատ | 1 | 46532 | 0 |
| 2 | Գեղարվեստական նկար | հատ | 2 | 155106 | 0 |
| 3 | Գեղարվեստական նկար | հատ | 2 | 124084 | 0 |
| 4 | Գեղարվեստական նկար | հատ | 1 | 46532 | 0 |
| 5 | Գեղարվեստական նկար | հատ | 1 | 186127 | 0 |
| 6 | Գեղարվեստական նկար | հատ | 2 | 93064 | 0 |
| 7 | Գեղարվեստական նկար | հատ | 2 | 124084 | 0 |
| 8 | Գեղարվեստական նկար | հատ | 2 | 108450 | 0 |
| 9 | Սինթեզատոր | հատ | 1 | 476000 | 47600 |
| 10 | Բարձրախոս | հատ | 2 | 490000 | 49000 |
| 11 | Բարձրախոսի լար | հատ | 2 | 10000 | 1500 |
| 12 | PM2000 | հատ | 1 | 250000 | 25000 |
| 13 | *Աթոռ* | հատ | 10 | 94000 | 0 |
| 14 | *Շախմատի սեղան* | հատ | 5 | 225000 | 0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 15 | *Ռոյալ «Ագարակ»* | հատ | 1 | 1961000 | 1176600 |
| 16 | *Բազկաթոռ* | հատ | 345 | 10531470 | 6740370 |
| 17 | *Ասփիճան* | հատ | 1 | 18000 | 12400 |
| 18 | *Փոշեկուլ* | հատ | 1 | 28000 | 22400 |
| 19 | *Վարագույր բեմական* | հատ | 2 | 704000 | 619520 |
| 20 | *Վարագույր բեմական* | հատ | 2 | 160000 | 140800 |
| 21 | *Վարագույր բեմական* | հատ | 1 | 1340000 | 1179200 |
| 22 | *Վարագույր բեմական* | հատ | 5 | 796000 | 700480 |
| 23 | *Էլեկտրական փաքացուցիչ* | հատ | 1 | 40000 | 35200 |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

**Հավելված 2**

ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի

քաղաքային համայնքի ավագանու

2015թ. դեկտեմբերի 11-ի թիվ 53 – Ա որոշման

# Ց Ա Ն Կ

«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը օգտագործման իրավունքով հանձնվող գույքի

| Հ/Հ | ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱ | ՉԱՓԻ ՄԻԱՎՈՐ | ՔԱՆԱԿ | ՄԻԱՎՈՐԻ ԳԻՆ /ՀՀ դրամ/ | ԳՈՒՄԱՐ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մշակույթային տուն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N08122015-09-0021) | հատ | 1 | 40733500 | 10968200 |
| | ***Ընդամենը՝*** | | | 40733500 | 10968200 |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱԳԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Ագարակի քաղաքային համայնք.Գարեգին Նժդեհ 5,
հեռ.(0286)22567 էլ-հասցե` agarak.syuniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 դեկտեմբերի 2015 թվական N54- Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ (ՀՈՂԱՄԱՍԵՐԻ, ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՕՏԱՐՄԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքապետի առաջարկությունը և որոշման նախագծի քվեարկության հետևյալ արդյունքները՝ կողմ-7, դեմ-0, ձեռնպահ-0, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի ավագանին

**որոշում է՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակ քաղաքային համայնքի քառամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մաս կազմող համայնքի սեփականություն համարվող գույքի (հողամասերի, շենքերի և շինությունների) օտարման 2015 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱԹԵՎՈՍ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԲՈՒՐԱՍՏԱՆ
ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՕՀԱՆՅԱՆ ԼԻԲԻԿ

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2015 թ. դեկտեմբերի 11
ք.Ագարակ

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի
քաղաքային համայնքի ավագանու
2015թ. դեկտեմբերի 11-ի թիվ 54 – Ա որոշման

# ԾՐԱԳԻՐ

**2016 թվականին**

**ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքային համայնքի սեփականություն համարվող անշարժ գույքի /հողամասերի, շենքերի և շինությունների/ օտարման**

1.ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքային համայնքի սեփականություն համարվող անշարժ գույքի (հողամասեր, շենքեր և շինություններ) օտարման 2016 թվականի ծրագիրը
նպատակաուղղված է քաղաքային համայնքի սոցալ-տնտեսական զարգացման և բյուջետային քաղաքականության ուղղություններով սահմանված խնդիրների, ինչպես նաև համայնքի բնակիչների բնակարանային և սոցիալական հարցերի լուծմանը:
2.2016 թվականի ընթացքում անշարժ գույքի օտարման հիմնական նպատակներն են՝
1)Գույքի օգտագործման արդյունավետության բարձրացումը.
2)Գույքի օտարումից, ստացված միջոցների հաշվին համայնքի բյուջեում եկամուտների ապահովումն ու ավելացումը:
3)Նպաստել համայնքում քաղաքաշինության զարգացմանը և ճարտարապետական նոր համալիրնեի կազմավորմանը:
3.2016 թվականին օտարումներ կատարել Ագարակի քաղաքային համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի հողերից, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերից, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերից և գյուղատնտեսական նշանակության հողերից 219,51հա դեռևս օտարված, օգտագործման կամ վարձակալությամբ տրված չէ: Առաջարկվում է 2016 թվականի ընթացքում օտարումներ կատարել վերոնշյալ հողերից:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Մ. ՁԱՔԱՐՅԱՆ